

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



Երկու նախարարությունների միջև փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է Էնթոյա պաշտոնական այցով Հայաստան ժամանած Իրանի Իսլամական Հանրապետության գյուղատնտեսական ջիհադի նախարար Մահմուդ Յոջջաթիի գլխավորած պատվիրակությանը:

Երկու երկրների պաշտոնյաները կարճատև առանձնագրույց են ունեցել, որի ընթացքում մտքեր են փոխանակել երկկողմ հետաքրքրություններ կայացնող մի շարք հարցերի շուրջ: Մահմուդ Յոջջաթին շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար՝ պատրաստակամություն հայտնելով զարգացնել Հայաստանի հետ համագործակցությունը գյուղատնտեսության ոլորտի տարբեր ճյուղերում:

Այնուհետև տեղի է ունեցել ընդլայնված կազմով հանդիպում, որի ընթացքում կողմերը քննարկել են հայ-իրանական փոխգործակցության զարգացման հիմնահարցերի լայն շրջանակ, ինչպես նաև նախանշել հետագա համագործակցության ուղղություններն ու հեռանկարները:

Ողջունելով հյուրերին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Իգնատի Առաքելյանը բարձր է գնահատել գյուղատնտեսության ոլորտում երկու երկրների միջև ձևավորված համագործակցությունը և վերջին տարիներին իրականացված աշխատանքները՝ միևնույն ժամանակ նշելով, որ առկա ներուժը դեռևս ամբողջովին չի օգտագործվում:

«Մենք կարևորում ենք գյուղատնտեսության բնագավառում հայ-իրանական հարաբերությունների ակտիվացումը և պատրաստ ենք քննարկել դրան նպաստող ամենատարբեր առաջարկությունները:

» 2

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քննարկվել է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի նախագիծը

Խորհրդակցությանը մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալներ Ռոբերտ Մակարյանը, Աշոտ Հարությունյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի հոդերի օգտագործման և մեկտրագիայի վարչության պետ Արթուր Բաղդասարյանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոս Գեղամ Նավոյանը, կաթիլային համակարգերի ներդրմամբ զբաղվող ընկերությունների ներկայացուցիչներ, ֆերմերներ և այլ անձինք:

Ներկայացնելով ծրագրի հիմնական դրույթները՝ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ ծրագրով ակնկալվում են ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, բերքատվության աճ, բերքի որակի բարելավում, հանրապետության ջրային, էներգետիկ և հողային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում, մշակովի հողատարածքների ընդլայնում՝ պոտենցիալ ոռոգելի, սակայն փաստացի չմշակվող տարածքների մշակման խթանում: «Նախատեսվում է պետական աջակցություն ցուցաբերել կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման գործընթացում՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով, բարձրացնել վարկավորման մատչելիության մակարդակը», - նշել է Իգնատի Առաքելյանը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարը նշել է նաև, որ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը հետևելու է պետական ծրագրերի իրականացման ընթացքին և գյուղացիական տնտեսություններին մատուցելու է անհրաժեշտ խորհրդատվություն:

Մտքերի փոխանակման ընթացքում, ծրագրի արդյունավետությունն ապահովելու նպատակով, որոշվել է հնչած խնդիրների վերաբերյալ 7-օրյա ժամկետում նախարարություն ներկայացնել համապատասխան առաջարկներ:

ԴԱՇՏՈՆԱԿԱՆ

Հանրապետության Նախագահի հետ աշխատանքային հանդիպման ընթացքում, գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը զեկուցել է նախարարությունում իրականացվող կառուցվածքային բարեփոխումների, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտի գերակա խնդիրների, իրականացվող պետական աջակցության նպատակային ծրագրերի մասին:

Իգնատի Առաքելյանը զեկուցել է, որ ընթացիկ տարում շարունակվել է հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի, դիզելային վառելիքի, սերմացուների, սուբսիդավորվող վարկերի տրամադրման ուղղությամբ աշխատանքը, կատարված խնայողությունների հաշվին մեկնարկել են նաև նոր ծրագրեր, որոնք ուղղված են ոլորտի զարգացմանը:

Նախագահը հանձնարարել է առաջ մղել գյուղատնտեսական մրցունակ ապրանքների արտահանման խթանմանը, ներմուծվող հիմնական գյուղատնտեսական մթերքների տեղական արտադրանքով փոխարինմանը, գյուղտնիկայի պարկի արդիականացման և գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման նպատակով, գյուղտնիկայի տրամադրման լիզինգի իրականացմանը, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանն ու աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված ծրագրերը:

Նախարարի պաշտոնակատարին հանձնարարվել է նաև հստակ ժամանակացույցով հատուկ թիրախային ծրագրեր մշակել և շարունակել աշխատանքը ոռոգման կաթիլային համակարգի, հակակարկտային ցանցերի ներդրման նպատակով գյուղացիական տնտեսություններին մատչելի ռեսուրսներով ապահովելու, պտղատու ինտենսիվ այգիների հիմնման խթանման ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Իգնատի Առաքելյանը հանրապետության նախագահի հետ հանդիպմանը տեղեկացրել է Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի մասին, որոնք հնարավորություն կընձեռեն խաղողագործության և գինեգործության ոլորտներում զարգացում ապահովել, բարելավել գինու արտադրանքի որակը, բարձրացնել հայկական գինու ճանաչելիությունը և խթանել արտահանումը:

Նախարարի պաշտոնակատարի զեկույցը ներառել է նաև ապահովագրական համակարգի ներդրման, մթերման գործընթացի կանոնակարգման, անտառապահպանական ծառայությունների ծրագրի իրականացման, ինչպես նաև Սևանա լճի ավազանում ձկան և խեցգետնի պաշարների պահպանության և արդյունավետ օգտագործման ծրագրերի ընթացիկ ու ակնկալվող արդյունքները, տոհմային անասնաբուժության, սերմնաբուժության և սերմնարտադրության համակարգի խթանմանն ուղղված ծրագրերի մշակման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հանրապետության նախագահի կողմից գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատարին զեկուցված հարցերի վերաբերյալ տրվել են նաև մի շարք այլ հանձնարարականներ:

Վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի ունեցած աշխատանքային խորհրդակցության ընթացքում քննարկվել են «Սևան» ազգային պարկի բարեփոխումներին վերաբերող հարցեր:

Մասնավորապես՝ ներկայացվել է «Սևան» ազգային պարկի բարեփոխումների և զարգացման հայեցակարգի նախագիծը: ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնակատար Արծվիկ Մինասյանը նշել է, որ հայեցակարգի նպատակը՝ տնտեսական և բնապահպանական շահերի

» 2

Նամայնբային

Էջ 3

Նարցագրույց

Էջ 5

Մասնագետի խորհուրդը

Էջ 7

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Երկու նախարարությունների միջև
փոխըմբռնման

1 հուլիսի 1-ը ստորագրվել

Կարևոր եմ համարում երկու երկրների գործարարներին ներկայացնել գյուղատնտեսության և ագրոարդյունաբերական համալիրի այն ճյուղերը, որոնք գրավիչ են առևտրատնտեսական կապերի զարգացման, ներդրումների համար: Առանձնակի ցանկանում եմք Ձեր ուշադրությունը հրավիրել Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ լինելու հանգամանքին, որով պայմանավորված՝ իրանական կողմը հնարավորություն կունենա Հայաստանի տարածքով իրանական գյուղատնտեսական ապրանքներն արտահանել դեպի ԵՏՄ շուկա»,- նշել է Իգնատի Առաքելյանը:

Իգնատի Առաքելյանի խոսքով՝ գյուղատնտեսության բնագավառում ներդրումներ կատարելու և համատեղ ծրագրեր իրականացնելու ռեալ հնարավորություններ կան բուսաբուծության, անասնաբուծության, ձկնաբուծության և վերամշակող արդյունաբերության ոլորտներում: Նախարարը հույս է հայտնել, որ Իրանի գյուղատնտեսության նախարարության պատվիրակության այցը Հայաստանի Հանրապետություն Նոր խթան կհանդիսանա երկու երկրների միջև փոխշահավետ համագործակցության համար, կնպաստի առևտրատնտեսական կապերի խորացմանն ու ամրապնդմանը: Իրանի Իսլամական Հանրապետության գյուղատնտեսական ջիհադի նախարար Մահմուդ Յոջջաթին իր ելույթում համառոտ ներկայացրել է Իրանի գյուղատնտեսության ներկա իրավիճակը, զարգացման գերակա ուղղությունները՝ ընդգծելով, որ տարբեր ոլորտներում ունեն մեծ հնարավորություններ, մասնավորապես՝ անասնապահության, այգեգործության, անտառաբուծության և ձկնաբուծության ոլորտներում իրենց փորձն ու գիտելիքները ներկայացնելու հայ գործընկերներին: Պատրաստակամություն հայտնելով սերտացնելու Հայաստանի հետ համագործակցությունը՝ Իրանի գյուղատնտեսության նախարարը մասնավորապես նշել է. «Հայաստանը կարող է կամուրջ դառնալ իրանցի և ԵՏՄ անդամ մյուս երկրների գործարարների միջև և ապրանքների արտահանման, և ներմուծման առումով: Անհրաժեշտ է հնարավորություններ ստեղծել համատեղ ներդրումներ իրականացնելու, ինչպես նաև իրանական կիսաֆաբրիկատները Հայաստանում վերջնական տեսքի բերելու և արտահանելու համար: Կարծում եմ, սրանք այն ոլորտներն են, որտեղ պետք է մեխանիզմներ մշակել երկու երկրների բիզնես աշխարհի ներկայացուցիչների միջև համագործակցությունն առավել սերտացնելու և զարգացնելու համար»:

Հանդիպման արդյունքներով՝ կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել ստեղծել համատեղ աշխատանքային խումբ, որը կզբաղվի գյուղատնտեսության ոլորտում հայ-իրանական համագործակցության զարգացման հարցերով:

Հանդիպման ավարտին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի բնագավառում համագործակցության մասին», որով կկարգավորվի բույսերի պաշտպանության, բույսերի և բուսական արտադրանքին առնչվող վնասակար օրգանիզմների վերահսկման բնագավառը, երկու երկրների տարածք ներթափանցման և տարածման վերահսկումն ու կանխարգելումը:

Քննարկվել են գյուղմթերքի իրացման
խնդիրներ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Ի. Առաքելյանն ընդունել է ՀՀ ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Հասմիկ Ջհանգիրյանին՝ Արարատի մարզի Հովտաշատ համայնքի (Մեհմանդարի) շուկայի մեծածախ առևտրով զբաղվող վաճառականների խնդիրները քննարկելու նպատակով:

Օրերս մամուլում տարածվել էր տեղեկատվություն, որի համաձայն Մեհմանդարի շուկայում որոշ գյուղմթերթի իրացման համար խոչընդոտներ են առաջացել, ինչը տեղական որոշ արտադրողների և ներմուծողների դժգոհության պատճառ է հանդիսացել: Իրավիճակին ծանոթանալու և խնդիրը պարզաբանելու նպատակով, ՀՀ Ագրոաշխատողների արհմիության ՃՀՄ նախագահ Հասմիկ Ջհանգիրյանը՝ Արմավիրի ԳԱՄԿ-ի տնօրեն Լևոն Ալեքսանյանի հետ այցելել են Հովտաշատի շուկա, գրուցել իրենց բերքը վաճառող գյուղացիների և որոշ վերավաճառողների հետ: Հ. Ջհանգիրյանի խոսքով՝ շրջայցի ընթացքում շուկայում գյուղացու շահերը ոտնահարելու, առևտուր իրականացնելու ընթացքում միտումնավոր արհեստական խոչընդոտներ ստեղծելու և անհավասար պայմանների առկայության վերաբերյալ ոչ մի բողոք չի արձանագրվել: Նա հավելել է, որ գյուղացիներն իրենց մտահոգությունն են հայտնել մի շարք խնդիրների վերաբերյալ, այդ թվում՝ մթերող կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքման, գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների, գյուղմթերքի իրացման, խորհրդատվության և այլ հարցերի շուրջ: Նախարար Իգնատի Առաքելյանը տեղեկացրել է, որ այս խնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում մշակվել են համապատասխան ծրագրեր:

Նախարարը նաև նշել է, որ հունիսի 10-ից Կասյան փողոցին հարող հրապարակում նախատեսվում է վերաբացել գյուղատնտեսական տոնավաճառը:

ԴԱՇՏՈՆԱԿԱՆ

1

հավասարակշռմամբ, ներդրումների ներգրավման միջոցով, տարածքում տնտեսական ակտիվության բարձրացումն է և զբոսաշրջության զարգացումը: Այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է միջոցառումներ իրականացնել լճի՝ որպես ազգային և տարածաշրջանային նշանակության քաղցրահամ ջրավազանի պահպանման, Էկոհամակարգի Էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ու բարելավման, հանգստյան գոտու զարգացման և ներդրումային գրավչության համար անհրաժեշտ իրավական (հարկային) միջավայրի ձևավորման, կառավարման, տնտեսական, բնապահպանական, քաղաքաշինական, հողօգտագործման խնդիրների լուծման և մի շարք այլ ուղղություններով:

Քննարկվել են հայեցակարգով առաջարկվող բարեփոխումների, ինչպես նաև «Սևան» ազգային պարկի կառավարման համակարգի բարեփոխումների և զարգացման հիմնադրույթների, Սևանա լճի ափամերձ հատվածի 2018-2030 թթ. տնտեսական զարգացման տեսլականի, ներդրումային ծրագրերի իրականացման վերաբերյալ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացրած առաջարկությունները: Կառավարության ղեկավարին զեկուցվել է նաև «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:

Հավանության արժանացնելով հայեցակարգով առաջարկվող լուծումները և մոտեցումները՝ վարչապետը կարևորել է տնտեսվարող սուբյեկտների գործունեության հստակ կանոնների սահմանումը և հանձնարարել համապատասխան առաջարկություններ ներկայացնել:

Վարչապետ Կարեն Կարապետյանն ընդունել է Իրանի գյուղատնտեսության նախարար Մահմուդ Յոջջաթիի գլխավորած պատվիրակությանը:

Վարչապետը կարևորել է Իրանի հետ տնտեսական համագործակցության զարգացումը և նշել, որ դրան կարող է եապես նպաստել գյուղատնտեսության ոլորտում համատեղ ներդրումային ծրագրերի իրականացումը, որոնք կխթանեն նաև առևտրաշրջանառության ծավալների աճին: Կարեն Կարապետյանն ընդգծել է, որ Մեղրիում ստեղծվող ազատ տնտեսական գոտում իրանական կապիտալի ներգրավումը ևս նոր թափ կհաղորդի երկկողմ տնտեսական կապերի ընդլայնմանն ու խորացմանը: Գործադիրի ղեկավարն ընդգծել է, որ ՀՀ կառավարությունը պատրաստ է իրանցի գործարարներին ցուցաբերել անհրաժեշտ օժանդակություն՝ մեր երկրում գործունեություն ծավալելու նպատակով: Վարչապետը վստահություն է հայտնել, որ դա թույլ կտա իրանական կողմին՝ բարենպաստ պայմաններով մուտք գործել Եվրասիական տնտեսական միության, ինչպես նաև GSP+ համակարգով եվրոպական շուկա:

Մահմուդ Յոջարին շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, վարչապետին է փոխանցել Եսիաղ Ջահանգիրիի ողջույններն ու բարեմաղթանքները: Իրանի գյուղատնտեսության նախարարը կարևորել է տնտեսական փոխգործակցության հետագա զարգացումը և նշել, որ բարեկամական ու մշակութային բազմաթիվ ընդհանրություններ ունեցող երկու երկրների տնտեսական հնարավորությունները պետք է միմյանց փոխլրացնեն՝ նոր թափ հաղորդելով առևտրաշրջանառության աճին: Պարոն Յոջարին գոհունակություն է հայտնել հայ գործընկերների հետ հանդիպումների արդյունքներից:

Հանդիպմանը քննարկվել են Հայաստանում արտադրանքի որակի գնահատման իրանական գրասենյակ, արտահանման և ներմուծման ընկերություն հիմնելուն, ձկնաբուծության ոլորտում ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև ՀՀ-ում լուիկի վերամշակման համատեղ գործարան ստեղծելու հնարավորություններին վերաբերող հարցեր:

ԽՈՐՀՐԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քննարկվել են ժամկետանց թունաքիմիկատների
կառավարման հարցերը

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն՝ նվիրված Հայաստանում ժամկետանց թունաքիմիկատների կառավարման խնդիրների քննարկմանը:

Խորհրդակցությանը մասնակցում էին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Իշխան Կարապետյանը, Կայուն օրգանական աղտոտիչների ոչնչացման ծրագրի համակարգող Գայանե Ղարազեբեկյանը, այլ պաշտոնատար անձինք:

Հանդիպման սկզբում Իշխան Կարապետյանը ներկայացրել է ոլորտի ներկա վիճակն ու առկա խնդիրները: Այնուհետև որոշվել է խիստ վերահսկողություն սահմանել թունաքիմիկատ-

ների իրացման կետերի, ինչպես նաև ժամկետանց թունաքիմիկատների պահեստավորման, պահպանման և ոչնչացման գործընթացների վրա: Բացի այդ, որոշվել է նաև կանոնակարգել թունաքիմիկատների ձեռքբերումը, վաճառքը և օգտահանումը, ինչպես նաև ժամկետանց թունաքիմիկատների փաթեթավորմանն առնչվող հարցերը: Խորհրդակցության մասնակիցները պայմանավորվել են համապարփակ ուսումնասիրել առկա բոլոր խնդիրները:

Խնդրին օպերատիվ լուծում տալու նպատակով, ձևավորվել է աշխատանքային խումբ, որը մեկնելու է Արարատի տարածաշրջանում տեղակայված պահեստներից մեկը՝ դիտարկելու արդյոք կարողությունները բավարար են ժամկետանց թունաքիմիկատներն այնտեղ ժամանակավորապես տեղափոխելու և պահպանելու համար:

Հայաստանում տոհմային ճտերի արտադրության կազմակերպում

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանն ընդունել է իրանական թռչնաբուծական «Մորդիարվար» ընկերության հիմնադիր տնօրեն Հոսեյնդոլի Լոթֆիին: Հոսեյնդոլի Լոթֆին տեղեկացրել է, որ ընկերությունը հետաքրքրված է Հայաստանում իրականացնել երկարաժամկետ գործունեություն տոհմային ճտերի արտադրության կազմակերպման ուղղությամբ:

«ՀՀ կառավարությունը խնդիր է դրել փոխարինել ներմուծումը տեղական արտադ-

րանքով, ուստի մենք ողջունում ենք Ձեր նախաձեռնությունը և հայտնում մեր պատրաստակամությունը՝ հնարավորինս աջակցել Ձեզ Հայաստանում արտադրության կազմակերպման ուղղությամբ»,- նշել է փոխնախարարը:

Այնուհետև Աշոտ Հարությունյանը Հոսեյնդոլի Լոթֆիի խնդրանքով, համառոտ ներկայացրել է Հայաստանում թռչնաբուծության ոլորտի ներկա վիճակը, առաջնային հարցերը, ինչպես նաև այս ոլորտում գործող օրենսդրական դաշտը:

Հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության հանգամանքը՝ նախարարի տեղակալը հնարավոր է համարել նաև հետագայում պատրաստի արտադրանքը արտահանել դեպի ԵՏՄ շուկա:

Միաժամանակ փոխնախարարն ընդգծել է բարձրորակ արտադրանքի ապահովման կարևորությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են արտադրության կազմակերպմանն առնչվող մի շարք այլ հարցեր ևս:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ
ԿԱՐԿՏԱՀԱՐՎԱԾ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԿԱՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը օրերս այցելել է Սյունիքի մարզ՝ դիտարկելու տեղացած ուժեղ կարկուտի պարճառած փնասի չափերը: Փոխնախարարը Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության ու բնապահպանության վարչության պետ Գագիկ Խաչատրյանի ուղեկցությամբ եղել է Գորիս, Տեղ, Խնձորեսկ, Արավուս, Կոռնիձոր, Ներքին Խնձորեսկ, Վաղարինի, Որոտան և Նորավան համայնքներում, գրուցել համայնքների ղեկավարների, գյուղացիների:

Ըստ նախնական ուսումնասիրությունների՝ մարզում առավելագույն տուժել են խոշորացված Գորիս, Տեղ, Ներքին Խնձորեսկ, Վերիշեն, Վերին Խոտանա, Կոռնիձոր, Սվարանց, Վաղատնի, Որոտան, Արավուս, Նորավան համայնքները՝ մոտ 60 տոկոսով, իսկ առանձին հողակտորներ՝ 80-100 տոկոսով: «Աշխատանքային խումբն առավել մանրակրկիտ կներկայացնի փնասի չափերը, հանձնաժողովը կամփոփի տվյալներն ու կներկայացնի կառավարություն: Չնայած որոշ համայնքներում, օրինակ Կոռնիձոր և Տեղ համայնքների որոշ դաշտերում կարկտահարության փնասը 80-90 տոկոս է կազմում, բայց հարակից տարածքներում այդուհանդերձ լավ բերք է սպասվում: Հուսանք, որ բնությունը նման տհաճ անակնկալներ էլ չի պատճառի», - իր խոսքում նշել է փոխնախարար Աշոտ Հարությունյանը:

Մասնագետները գյուղացիներին խորհրդատվություն են տրամադրել կարկտահարության փնասների վերականգնմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ, իսկ 100 տոկոսով փնասված մշակաբույսերը, որոնք հնարավոր չէ վերականգնել, խորհուրդ են տվել օգտագործել որպես կանաչ պարարտանյութ և անցկացնել հողի տակ:

Փոխնախարարի հետ զրույցում այլոնեցիները գոհունակություն են հայտնել պարարտանյութերի բաշխման գործընթացից: Գորիս համայնքի բնակիչ Էդիկ Բունիաթյանի խոսքով՝ իրենք առավել քան գոհ են այս տարի ներկրված ազոտական պարարտանյութից: այն որակով էր ու ժամանակին հասցվեց: «Նախորդ տարիների համեմատ այս տարի պարարտանյութերի բաշխման գործընթացը շատ լավ էր կազմակերպված, ըստ պահանջի ստացել ենք, բարձր որակի էին թե վրացական, և թե պարսկական պարարտանյութերը», - նշել է համայնքի ղեկավար Սերյոժա Հայրապետյանը:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ԳՈՀ ԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ

ՀՀ Արարարի մարզի Ռանչպար համայնքում կազմակերպված են ընթացել գարնանացանի աշխատանքները, որոնք արվել են որակով և ավարտվել են ժամանակին: Համայնքի ղեկավար Մանուկ Օհանյանի կարծիքով, գյուղատնտեսական աշխատանքների հաջող ընթացքը պայմանավորված էր աջակցության մի շարք ծրագրերով, որոնք իրականացվել են ՀՀ կառավարության և, մասնավորապես, մարզպետարանի կողմից:

Ժամանակին է ստացվել դիզվառելայնությամբ, պարարտանյութերն ու սերմնացուն: Գյուղում ավանդաբար մշակում են ցորեն, գարի, կարտոֆիլ, ծմերուկ, ինչպես նաև բանջարանոցային այլ մշակաբույսեր՝ վարունգ, լոլիկ, տաքդեղ, սմբուկ, լոբի, սոխ, սխտոր և այլն: Անասնակերի ստացման նպատակով ցանում են նաև առվույտ: Համայնքի ղեկավար Մանուկ Օհանյանի տեղեկացմամբ, բերքատվության բալոր ցուցանիշներով աչքի են ընկնում հատկապես աշնանացան ցորենի ցանքատարածքները: Համայնքի ղեկավարը նշեց նաև, որ ընթացիկ տարում, նախորդ տարվա համեմատությամբ զգալիորեն ավելացել են տարբեր մշակաբույսերի ցանքատարածքները: Տարածաշրջանի բնակլիմայական պայմանները նպաստավոր են նաև ջերմոցային տնտեսությունների զարգացման համար, քանի որ արևային օրերի քանակությունը բավականին մեծ է: Գյուղում արդեն գործում է ջերմոցային երկու տնտեսություն՝ 3 հա տարածքով, որոնք մասնագիտացել են բանջարեղենի արտադրությունում: Աշխատանքներում ներգրավված են 25 ընտանիքներ: Համայնքի ղեկավարի կարծիքով, միակ հիմնախնդիրը բնական զագի բացակայությունն է, ինչի հետևանքով ձմռան ամիսներին ջերմոցները ջեռուցվում են էլեկտրական հոսանքի միջոցով, այդ պատճառով՝ բարձրանում է արտադրանքի ինքնարժեքը: «Գյուղի գաղփիկացման համար արվել են նախագծանախահաշվային աշխատանքները, որոնք ներկայացվել են համապատասխան գերատեսչություններին: Գյուղապետարանը պատրաստ է կատարելու իր ներդրումները, առայժմ սպասում ենք ծրագրի իրականացմանը», - պատմում է Մանուկ Օհանյանը: Նրա կարծիքով, խնդրի կարգավորման դեպքում գյուղում կհիմնվեն մրգերի և բանջարեղենի չորացման փոքր արտադրամասեր: Ամենակարևորը, ըստ համայնքի ղեկավարի, կարգավորված է ոռոգման ջրի հարցը, ինչի շնորհիվ, առանց խոչընդոտների, կազմակերպվում է գյուղմթերքների արտադրությունը: Այդ պատասխով գյուղացիներն ունեն նաև համապատասխան գյուղատնտեսական տեխնիկա: «Գագիֆիկացման խնդրի կարգավորման դեպքում մեր գյուղից արտագնա աշխատանքի չեն մեկնի, քանի որ մեզ մոտ առկա են թե բուսաբուծության և պտղաբուծության, և թե անասնաբուծության զարգացման համար բոլոր անհրաժեշտ պայմանները: Բացի այդ, լայն հնարավորություններ են բացվել նաև գյուղմթերքների արտահանման համար: Գյուղատնտեսական արտադրության զարգացումը կնպաստի աշխատատեղերի ավելացմանը, որը շատ կարևոր է սահմանամերձ Ռանչպար գյուղի համար», - եզրահանգում



է համայնքի ղեկավարը: Յուրաքանչյուր տարի Ռանչպարից արտագնա աշխատանքի է մեկնում բնակչության 15-20 %-ը, ովքեր աշնանը կրկին հետ են վերադառնում: Բարեբախտաբար չկան գյուղից մշտական բացակայող ընտանիքներ:

Օրերս ռանչպարցիները մեծ խանդավառությամբ մասնակցեցին համահանրապետական շաբաթօրյակին: Ամբողջությամբ մաքրվել և աղբից ազատվել են թե գյուղամիջյան ճանապարհներն ու մայրերը, և թե մայրուղին: Ի դեպ, աշխատանքներում ընդգրկվել են նաև դպրոցահասակ երեխաները: Համաձայն նախնական պայմանավորվածության՝ գյուղի 25 հա հողտարածքներ կտրամադրվեն օտարերկրյա ներդրողներին՝ գյուղմթերքների արտադրություն կազմակերպելու նպատակով: Ծրագրի իրականացման դեպքում կբացվի 100-150 աշխատատեղ: «Գյուղացիները լավատես են, հույսով ու հավատով սպասում են նոր ծրագրերի իրականացմանը: Եվ որ ամենակարևորն է՝ գյուղացիները գոհ են ՀՀ կառավարության բազմակողմանի աջակցությունից», - հավելում է համայնքի ղեկավարը: Ինչ վերաբերում է անասնաբուծությանը, ապա այն նույնպես զարգացման միտում ունի. գյուղում առկա են շուրջ 500 գլուխ խոշոր, 110 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, 4200 գլուխ թռչուն, 300 գլուխ ճագար:

Ի դեպ, Ռանչպարում բնակվում են նաև եզդիներ: Նրանց ազգային մշակույթի պահպանման նպատակով գործում է եզդիների ազգային երգչախումբը, որը հյուրախաղերով հանդես է գալիս նաև արտերկրում: Եզդիների հիմնական զբաղվածությունն անասնաբուծության զարգացումն է, իսկ վերջին տարիներին մասնագիտացել են նաև բանջարեղենի արտադրության ուղղությամբ: Ուշագրավն այն է, որ եզդիները գրեթե արտագնա աշխատանքի չեն մեկնում, քանի որ հայրենի կառավարության և, մասնավորապես, Արարատի մարզպետարանի կողմից, արվում է ամեն ինչ՝ նրանց բարեկեցության, սոցիալական վիճակի բարելավման և ազգային ինքնությունը պահպանելու ուղղությամբ:

Նեյի Սահակյան

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դահլիճում կայացավ ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի 2016-2017 թթ. ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի, ինչպես նաև երևանի (Ի-Վի-Էն) Գինու ակադեմիայի շրջանավարտների ավարտական արարողությունը: Միջոցառմանը մասնակցում են ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան ծրագրի տնօրեն Աննե Կեմպան, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան ծրագրի ներկայացուցիչ Լայլա Բաշամը, Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի պրոֆ. Ջոն Նիքքլսը, ՀԱԱՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արշալույս Թարվերդյանը:

Այս տարի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի (ԱՌԻԿ) բակալավրիատն ավարտել է 29 ուսանող: Մինչ օրս ԱՌԻԿ-ի բակալավրիատն ավարտել է 448 շրջանավարտ, որոնցից 53-ը՝ Վրաստանի Հանրապետությունից: Միջազգային կրթական փոխանակման ծրագրերի շրջանակներում կենտրոնում ուսանում կամ ուսումնաարտադրական պրակտիկա են անցկացնում նաև ուսանողներ՝ այլ երկրներից: Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիրը (MAB) մինչ օրս տվել է 92 շրջանավարտ, այդ թվում 16-ը՝ այս տարի, ներառյալ երեքը՝ վրացիներ: Մագիստրատուրայում, բացի ԱՌԻԿ-ի բակալավրիատն ավարտածներից, սովորում են նաև ուսանողներ՝ ԵՊՀ-ից, ՀՊՏՀ-ից, հայաստանյան այլ համալսարաններից և Բաթումի Շոթա Ռուսթավելի պետական համալսարանից: Հանդիսավոր միջոցառման բացման խոսքով հանդես եկավ ՀԱԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերդյանը: «Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը տարածաշրջանային նշանակության արևմտյան տիպի կրթական հաստատություն է, որը ՀԱԱՀ-ում գործում է 2000 թ.-ից, նախ՝ ԱՄՆ գյուղատնտեսության, իսկ 2014թ.-ից՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ: ԱՌԻԿ-ի Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիրը (MAB) մեկնարկել է 2010թ.-ին: Այսպիսով, Կենտրոնն առաջարկում է ագրոբիզնեսի և շուկայա-

բանության երկաստիճան կրթական ծրագիր: Բակալավրիատ ընդունվում են ՀԱԱՀ-ի և Վրաստանի գործընկեր բուհերի բակալավրիատի երկրորդ կուրսն ավարտած ուսանողները: Ուսուցումն անցվերենով է, ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը հիմնված են ԱՄՆ Տեխասի Էյ ընդ Էմ (գյուղատնտեսության և մեքենաշինության) համալսարանի գյուղատնտեսական տնտեսագիտության ուսումնական պլանների և ծրագրերի վրա: Ավարտելով կենտրոնը՝ ուսանողները ստանում են ՀԱԱՀ (կամ համապատասխան վրաստանյան բուհի) դիպլոմ և Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի ավարտական վկայական», - նշում է պրն Թարվերդյանը, ապա հավելում, որ ԱՌԻԿ-ը բարձր որակավորմամբ մասնագետներ է պատրաստում տնտեսագիտության, մարքեթինգի և կառավարման ոլորտներում՝ անցվերենի գերազանց իմացությամբ և հաղորդակցական ժամանակակից հմտություններով: ԱՌԻԿ-ի շրջանավարտները մրցունակ են ագրոբիզնեսի, առհասարակ բիզնեսի հատվածում, ֆինանսական հաստատություններում և միջազգային կառույցներում: «Շրջանավարտների աշխատանքի տեղավորման վիճակագրությունը ցույց է տալիս, որ ԱՌԻԿ-ի շրջանավարտներն ավարտելուց հետո մասնագիտական աշխատանք գտնելու խնդիր, ըստ էության, չեն ունենում: Մի քանի ամսվա ընթացքում շրջանավարտների ավելի քան 90 %-ն անցնում է միջինից կրկնակի բարձր վարձատրվող մասնագիտական աշխատանքի՝ թե՛ Հայաստանում, և թե՛ Վրաստանում», - տեղեկացնում է «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի կարիերայի խորհրդատու և համակարգող Լուսինե Մնացականյանը:

«Գյուղատնտեսության ոլորտում Հայաստանի և ԱՄՆ-ի միջև համագործակցությունն ունի 25 տարվա պատմություն, այսինքն՝ գրեթե նույնքան, որքան գոյություն ունի անկախ Հայաստանի Հանրապետությունը: ԱՄՆ մեր գործընկերների ցուցաբերած համակողմանի օժանդակության մեջ մշտապես մեծ դեր է վերապահվել գյուղատնտեսական կրթությանը: Այդ համագործակցության մնայուն արդյունքն է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը: Իր գոյության 17 տարիների ընթացքում կենտրոնը կայացել

է՝ որպես ագրոբիզնեսի ոլորտի արդիական կրթական հաստատություն՝ ոչ միայն երկրի, այլև՝ տարածաշրջանի մասշտաբով», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը: ԱՌԻԿ-ի տնօրեն Վարդան Ուռուտյանը շնորհավորելով Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի բակալավրիատի և մագիստրատուրայի, ինչպես նաև Ի-Վի-Էն Գինու ակադեմիայի շրջանավարտներին, նշել է, որ հուզմունքն ու հանդիսավորությունը մշտապես նույնն են, սակայն ամեն տարի երկու ուսումնական կենտրոնները թարմ աեսլիք են ունենում: «Մասնավորապես, անցնող ուսումնական տարին նշանավորվեց ԱՌԻԿ-ում հաջողությամբ ներդրված Սնդիկ անվտանգության համակարգերի կառավարում՝ կրթական ծրագրով, որը միանգամայն նոր խոսք է մեր կրթական համակարգում: Այն կյանքի կոչվեց մեր գործընկեր Փենստեյթ և Վիրջինիա Թեք համալսարանների հետ համատեղ՝ ԱՄՆ ՄԶԳ ԻննովեյթՅԻՐ-Հայաստան ծրագրի ֆինանսավորմամբ: Մեկ այլ լավագույն օրինակ է Գինու ակադեմիայի այսօրվա շրջանավարտ կուրսի գրեթե բոլոր ուսանողների մասնակցությունը գինու համաշխարհային ամենամեծ՝ ՊրոԿայն ցուցահանդեսին և ուսումնաճանաչողական այցը գործընկեր Գայգենիայմի համալսարան: Սա հնարավոր դարձավ Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության՝ DAAD-ի աջակցության շնորհիվ: Ընթացքի մեջ է նորարարական այլ ծրագրերի ներդրումը. որոնց մասին վստահաբար առիթ կունենան նշելու հաջորդ տարվա ավարտական արարողության ժամանակ», - նշել է ԱՌԻԿ-ի տնօրեն Վարդան Ուռուտյանը: ԱՌԻԿ-ում դասավանդում են ԱՄՆ և Եվրոպայի առաջատար համալսարաններում գիտական աստիճաններ ստացած հայ և ամերիկացի դասախոսներ: Երևանի (Ի-Վի-Էն) գինու ակադեմիան այս տարի տալիս է իր երկրորդ շրջանավարտ կուրսը: Նախորդ տարի ավարտած առաջին 14 շրջանավարտներն ամբողջությամբ ապահովվել են մասնագիտական աշխատանքով: Միայն փոքրաթիվ շրջանավարտներ առայժմ չեն աշխատում, շրջանավարտների գերակշռող մասն աշխատանքի է անցել՝ ուսանողական նստարանից:

Նեյի Սահակյան

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐԸ ՆՇՎԵՑ ՄԵԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՄԲ

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, Հայաստանում ԵՄ պարավիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիդալսկիի հրավերով, ներկա է գտնվել Եվրոպայի օրվան նվիրված տեղեկատվական ցուցահանդեսի բացման արարողությանը: Ներկաներին ուղղված ողջույնի իր խոսքում Հայաստանում ԵՄ պարավիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիդալսկին շնորհակալություն է հայտնել Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին՝ մայրաքաղաքում Եվրոպայի օրվան նվիրված միջոցառումների պարզաճ կազմակերպման ու անցկացման հարցում ցուցաբերած աջակցության համար:

Երևանի քաղաքապետը, դեսպանի ուղեկցությամբ, շրջել և ծանոթացել է Հյուսիսային պողոտայում օրվա շրջանակում բացված տեղեկատվական ցուցահանդեսում ներկայացված ցուցանմուշներին: Պատասխանատուները նշել են, որ տաղավարներում ներկայացված են ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը, որոնք ընդգրկում են տարբեր ոլորտներ՝ այդ թվում՝ գյուղ-թերքների արտադրություն, մշակույթ, կրթություն, տուրիզմ, շրջակա միջավայր և այլն: Բացի այդ, տեղեկատվական ցուցահանդեսի միջոցով այցելուները հնարավորություն են ստանում բացահայտելու Եվրոպայի, Եվրոպական Միությունն ու Եվրոպական մշակույթի բազմազանությունը: Շնորհակալություն հայտնելով դեսպան Պյոտր Սվիդալսկիին հրավերի համար՝ քաղաքապետ Տ. Մարգարյանը մեկ անգամ ևս ընդգծել է, որ Երևանի քաղաքապետարանը միշտ բաց և պատրաստակամ է տարբեր ձևաչափերով Եվրամիության հետ համագործակցությանը:

EMPARD ծրագրի ՄԱԱԶԿ բաղադրիչի ղեկավար Սերգեյ Մաթևոսյանը նշեց, որ Եվրոպայի օրը դիմավորում են՝ ծրագրի աջակցությամբ գործող արտադրանքի ցուցադրությամբ: «Ծրագրի շրջանակներում ստեղծվել են գյուղատնտեսական 53 կոոպերատիվներ: Ցուցադրման ենք բերել վերջիններիս կողմից արտադրված բարձրարժեք պանրատեսակներ, ոչ ավանդական մշակաբույսեր, կանաչ և վերամշակված (բոված) հնդկաձավար, չրեր, բուսական թեյեր և այլն: Պանրատեսակները բերվել են հանրապետության 6 մարզերից, որոնցում գործում են մասնագիտացված կոոպերատիվները: Կազմակերպվել է նաև «Լոռի», «Կապույտ պանիր» (բորբոսոդ), «Գաուդա» և այլ պանրատեսակների համույն», - ասում է Սերգեյ Մաթևոսյանը: Ինչ վերաբերում է հնդկացորենի ցանքատարածքներին, ապա 2016 թ.-ին դրանք հասել են 540 հա-ի, իսկ առաջիկայում կկրկնապատկվեն: Սերգեյ Մաթևոսյանը հույս հայտնեց, որ հնդկացորենի արտադրության ընդլայնման շնորհիվ, Հայաստանն առաջիկայում կդառնա ինքնաբավ:

Հարուստ ու բազմազան էր ՀՀ Արագածոտնի մարզի «Բյուրակն» կոոպերատիվի տաղավարը, որտեղ ներկայացված էր չրերի հարուստ տեսականի: Կոոպերատիվի նախագահ Ծովիկ Օհանյանը նշեց, որ կուլենար հնարավորություններ ստեղծվեին՝ օրգանական և ավանդական եղանակով արտադրված չրերը նաև Եվրոպական երկրների շուկաներին հասանելի դարձնելու համար: Ի դեպ, այցելուները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին ներկայացված արտադրատեսակա-նու նկատմամբ, իսկ քաղցր սուլուխը համոտների ընթացքում մեծ հավանության արժանացավ: «Մեր կոոպերատիվն արդեն երրորդ տարին է՝ համագործակցում է Եվրոպական EMPARD ծրագրի հետ, որի աջակցությամբ ձեռք



ենք բերել չրի արտադրության նոր սարքավորումներ, մասնակցել ենք մի շարք ցուցահանդեսների, որոնց արդյունքում ձեռք ենք բերել նոր շուկաներ», - պատմում է Ծովիկ Օհանյանը:

«Լուկաշինի գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը համագործակցում է Ավստրիայի զարգացման գործակալության հետ և, OASI ծրագրի աջակցությամբ, սկսած 2015 թ.-ից, կազմակերպում է օրգանական չրերի արտադրություն: Կոոպերատիվի նախագահ Վարդգես Դավթյանը տեղեկացրեց, որ արտադրում են նաև ոչ ավանդական չրատեսակներ: «Օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում նոր ուղղություն է: Մեր կոոպերատիվն օրգանական գյուղմթերքների արտադրությամբ զբաղվում է դեռևս 2006 թ.-ից: Իսկ 2008 թ.-ին այդ նպատակով հիմնեցինք այգիներ, կազմակերպում էինք նաև օրգանական բանջարեղենի արտադրություն», - պատմում է կոոպերատիվի նախագահը, ապա հավելում, որ կոոպերատիվը սիրով համագործակցում է մի շարք Եվրոպական ծրագրերի հետ:

ՀՀ Արագածոտնի մարզի տարածաշրջանում գյուղատնտեսական լայն գործունեություն է ծավալում «Աշտարակ» ֆերմերային խումբը, որի հիմնական զբաղմունքը ոչ ավանդական մշակաբույսերի արտադրությունն է: Իսմբի ղեկավար Գնել Մխիթարյանը նշեց, որ Եվրոպայի օրվա կապակցությամբ ցուցահանդեսին ներկայացրել են սածիլներ և սերմանյութի ստացման համար աճեցված բույսեր, ինչպես նաև տարբեր բուսատեսակների սեղումակալներ: Այցելուների ուշադրությունն էին գրավում արտիշոկի, մրգային ֆիզալիսի, եղեսպակի, ինչպես նաև ավանդական լոլիկի սածիլները: «Ներկայացրել ենք հիմնականում բանջարեղեն, կաղամբազգիներ, բազմամյա և բազմահար համեմունքային և եթերայուղատու խոտաբույսեր: Առաջիկայում «Աշտարակ» ֆերմերային խումբը կվերածվի կոոպերատիվի», - տեղեկացնում է Գնել Մխիթարյանը: Նրա կարծիքով՝ Հայաստանում աստիճանաբար մեծանում է հետաքրքրությունը ոչ ավանդական մշակաբույսերի նկատմամբ, որոնց շատ տեսակները արդեն շրջանացվել են: Ինչ վերաբերում է առաջիկա ծրագրերին, ապա ընթացիկ տարում ևս կկազմակերպեն սերմարտադրություն, ինչպես նաև կփորձարկեն նոր բուսատեսակներ:

ԱրտադրատեսակաՆու բազմազանությամբ ուշագրավ էր նաև «ORWAGO» ՓԲԸ-ի տաղավարը: Այստեղ ներկայացված էին կենսածին պարարտանյութեր, կենսահեղուկ, կենսահումուս, օրգանոմիկս և այլն: Արտադրանքը սերտիֆիկացված է «Էկոգլոբ» կազմակերպության կողմից և թույլատրված է

օգտագործել օրգանական գյուղատնտեսությունում: Ընկերության վաճառքի մենեջեր Մնացական Ավետիսյանը նշեց, որ «ORWAGO»-ն միակն է, որն ունի օրգանական սերտիֆիկատ: Պարտանյութերն իրենց մեջ պարունակում են բույսերին անրաժեշտ մակրո և միկրո էլեմենտներ, որոնք նպաստում են դրանց աճին: Ավելի քան 20-35 % -ով ավելանում է նաև բերքատվությունը:

Թամարա Մաղաքյանը ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում զբաղվում է մեղվաբուծությամբ, կազմակերպվել է նաև ընտանեկան ֆերմերային տնտեսություն: Կին գործարարը կարևորում է նման միջոցառումների կազմակերպումը, որի ընթացքում այցելուները հնարավորություն են ունենում ոչ միայն ծանոթանալ Եվրոպայի աջակցությամբ Հայաստանում արտադրվող գյուղմթերքների տեսականուն, այլև՝ համոտեսել: «Ես իմ գոհունակության խոսքերն եմ ուղղում Եվրոմիությանը՝ օրգանական գյուղմթերքների արտադրության գործում մեզ աջակցելու համար: Իսկ այսպիսի միջոցառումները, անշուշտ, ունեն դրական ազդեցություն: Ցուցահանդեսը հնարավորություն է ընձեռում նաև ավանդական եղանակով արտադրված սննդամթերքը տարբերել օրգանականից, քանի որ վերջինս ունի համապատասխան սերտիֆիկատ», - նշում է Թամարա Մաղաքյանը, ով ծրագրի աջակցությամբ ավանդական մեղվաբուծությունից անցել է օրգանականի:

«Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի» ներկայացուցիչ Թագուհի Մանվելյանը հաճույքով ներկայացնում է Եվրոմիության աջակցությամբ իրականացվող «Աղբատնային կրճատումը Ուրցաձոր համայնքում» ինքնուրույն զբաղվածության հնարավորությունների ստեղծումով՝ ծրագիրը, որը սոցիալական ձեռնարկատիրության միջոցով, նպաստում է համայնքային զարգացմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ

Արարատի մարզի Ուրցաձոր և Լուսաշող համայնքներում, որոնցում հիմնվել են բուսական թեյերի և չորամրգերի արտադրամասեր: Կազմակերպում են նաև մեղրի արտադրություն: Նախատեսվել են զարգացնել էկոագրոտուրիզմը, այդ նպատակով հիմնվել են հյուրատներ, կստեղծվեն նաև նոր աշխատատեղեր:

Տոնահանդեսի մասնակիցներն այցելեցին նաև «Օքսֆամ» միջազգային կազմակերպության տաղավարը, որտեղ ոչ միայն հնարավորություն ունեցան համոտեսելու վերջինիս աջակցությամբ



յամբ հանրապետության մարզերում կազմակերպվող գյուղատնտեսական կոոպերատիվների արտադրած քաղցրահամ մրգերը, այլև ծանոթացան իրականացվող աջակցության ծրագրերին: Ներկայացված էին ոչ միայն բաց գրունտի պայմաններում, այլև՝ ջերմոցներում արտադրված միզն ու բանջարեղենը: «Օքսֆամ» միջազգային կազմակերպությունը, իր գործունեությամբ, նույնպես նպաստում է համայնքներում ոչ միայն աղքատության նվազմանը, այլև արտազաղթի կրճատմանը:

Տոնակատարությունն ուղեկցվում էր բացօթյա համերգով, այցելուներին առանձնակի աշխուժություն էին պարգևում տաղավարներում կազմակերպված վիկտորինաները, որոնց ընթացքում հաղթողները պարգևատրվում էին փոքրիկ նվերներով: Հարկ է նշել, որ այս տարի Եվրոպայի օրվա տոնակատարությունն անցկացվեց «Եվրոպական Միությունը՝ Հայաստանի համար» խորագրի ներքո:

Նեյի Սահակյան

ՓՄՁ ԶԱԿ-ի կառուցած ջրագիծը Փոքր Վեդիում ռոռզում է 30 հա մշակովի հողեր

Վերջերս Արարատի մարզի Փոքր Վեդի (Խոր Վիրապ) համայնքում Զայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հյուրընկալել էր ԱՄՆ ՄՁԳ (USAID) տարածաշրջանային իրավախորհրդատու Ջեյմս Զելեհերին, տարածաշրջանային ֆինանսական վերահսկիչ Ռոբերտ Արե-լանոյին և տարածաշրջանային պայմանագրային գրասենյակի տնօրեն Մայքլ Ռոսմանին:

Նրանք ԱՄՆ ՄՁԳ Հայաստանյան առաքելության պատվիրակության հետ այցելեցին Փոքր Վեդիում ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ վերակառուցված խորքային հորի տարածք, որտեղից սկիզբ է առնում նաև ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ կառուցված 560 մ երկարությամբ ռոռզման ջրագիծը: Նախագիծն իրականացվել է ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և նրա գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում:

Ծրագրի ղեկավար Սյունիք Թադևոսյանը հյուրերին տեղեկացրեց, որ հորը և ջրագիծը ռոռզման ջրով են

ապահովում 40 տնային տնտեսություններին պատկանող 30 հեկտար մշակովի հողերը: Ծրագրի շահառուներից ֆերմեր Գառնիկ Մանուկյանն էլ վստահեցրեց, որ մինչև ջրագծի շահագործումը գյուղացիները չէին կարողանում հողը մշակել, ուստի և հավելյալ եկամուտ ստանալ այդ 30 հեկտար հողերից:

Այնուհետև հյուրերն «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում, այցելեցին չինամյութի տեսքով դրամաշնորհի ստացած հայր և որդի Ջոհրապ և Արմեն Ղազարյանների ջերմոց: 270 մ² տարածքով ջերմոցում այդ պահին աճեցվում էր լոլիկ: Լոլիկից հետո ծրագրի շահառուներն աճեցնելու են վարունգ: Ջոհրապ Ղազարյանի խոսքով՝ ջերմոցը թույլ տվեց հավելյալ եկամուտ ունենալ նաև ծննան ընթացքում շուկայում ավելի թանկ վաճառելով այնտեղ աճեցված բանջարեղենը: Արմեն Ղազարյանն էլ նշեց, որ նախատեսում են շուտով կառուցել նոր 1000 մ² տարածքով ջերմոց:

www.smednc.am

ՀԱՐՑԱԶԻՐՈՒՅՑ

ԴԻԼԻՋԱՆՔԱՂԱՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԳԱՐԵՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԲԱՑԵԼ ՇՈՒՐՔ 120 ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ



«Կիլիկիա» հայկական գարեջրատեսակները, համային և որակական բարձր հատկանիշների շնորհիվ իրենց ուրույն տեղն են գրավել ինչպես հայկական, այնպես էլ արտերկրի շուկաներում: Շուրջ 4 տարի առաջ Դիլիջանում սկսված գարեջրի գործարանի կառուցումը արդեն ավարտված է: Նոր արտադրության սեփականատերերն է «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ի խորհրդի

նախագահ և համասեփականատեր, «Հ և S Հակոբյաններ» ՍՊԸ-ի սեփականատեր Հակոբ Հակոբյանը:

Ծնվել է Երևան քաղաքում: Ավարտելով Երևանի սննդի արդյունաբերության տեխնիկումը՝ ստացել է տեխնիկ-մեխանիկի որակավորում: Ապա ուսումը շարունակել է պոլիտեխնիկական ինստիտուտում: Պաշտպանել է գիտական թեզ, ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1974 թ.՝ Երևանի գարեջրի գործարանում, 2000-2003 թթ. աշխատել է «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ի տնօրեն, 2003-2007 թթ.՝ գլխավոր տնօրեն: 2007 և 2012 թ. ընտրվել է ԱԺ Պատգամավոր: ՀՀ Նախագահի կողմից արժանացել է շնորհակալագրի: Ռուսաստանի ինժեներական ակադեմիայի նախագահության որոշմամբ, 2014 թ. արժանացել է փառքի շքանշանի: Պարգևատրվել է Հայաստանի արդյունաբերողների և գործարարների Միության» ոսկե մեդալով:

Պարոն Հակոբյան, տարիներ առաջ, մեր հանդիպման ժամանակ նշեցիք որ մտադիր եք Դիլիջան քաղաքում գարեջրի արտադրություն հիմնել: Ինչպես իրականացրեցիք այդ գաղափարը:

2000 թվականից սկսած՝ Դիլիջան քաղաքում ստեղծել և շարունակում եմ ստեղծել աշխատատեղեր՝ անասնապահության և արտադրական տարբեր ուղղություններում: Դրա բաղկացուցիչ մասն է նաև ներկայումս կառուցվող գարեջրի գործարանը, որը գրեթե պատրաստ է և հունիսի վերջին կարող է արտադրանք տալ: Գործարանն ամբողջ հզորությամբ աշխատելու դեպքում, կստեղծվեն շուրջ 120 նոր աշխատատեղեր:

Արտադրության հզորությունը, ինչպիսին է լինելու, գարեջրի ինչ տեսակներ կարտադրվեն:

Գործարանի հզորությունը կլինի տարեկան մոտ 10 մլն. լիտր, այսինքն՝ միջին կարգի արտադրություն: Նախնական տեսականին՝ «Դիլիջան» «Դիլիջան 1» և «Դիլիջան 2» անվանումներով գարեջրատեսակներ կլինեն: Այնուհետև կառաջնորդվենք շուկայի պահանջարկով: Ինչ տեսքի, համի գարեջրի պահանջարկ եղավ շուկայում, այդ տեսականին էլ կարտադրենք, որն էլ խնդիր չեմ տեսնում: Շշալցվելու են 0,33 և 0,45 և ապակե և մեկ լիտրանոց պոլիէթիլենային շշեր, ինչպես նաև 30, 50 լիտրանոց տակառներ՝ լցնովի գարեջրի վաճառքի համար: Լինելու է բարձրորակ գարեջուր, սակայն տարբերվելու է Կիլիկիա գարեջրից, քանի որ պատրաստվելու է այլ բաղադրատոմսով:

Որտեղից եք ձեռք բերում հումքը, առաջիկայում ինչ անելիքներ կան այդ ուղղությամբ:

Հումքը, առայժմ բերում ենք դրսից: Գործընկերոջս՝ «Կիլիկիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Աշոտ Բաղդասարյանի հետ միասին, Գյումրիում կառուցում ենք ածիկի գործարան: Հայաստանում, ներկայումս գարեջուր արտադրելու համար որակյալ գարի չկա, որպեսզի կարողանանք ածիկ պատրաստել: Առաջիկայում պլանավորել ենք գյուղացիական տնտեսությունների հետ աշխատել պայմանագրային հիմունքներով, որպեսզի նրանք հատուկ տեսակների որակյալ գարի աճեցնեն և մթերեն:

Ինչ մասնագետներ են աշխատում գործարանում:

Բնականաբար, գարեջրի գործարանի կառուցումը նախնառաջ դիլիջանցիների համար է: Ընդհանուր առմամբ, աշխատողները հիմնականում կլինեն Տավուշի մարզից: Այս պահին այնտեղ գարեջրի մասնագետներ չունենք, Երևանից 5-6 մասնագետներ՝ 3 ամսից մինչև մեկ տարի ժամկետով կգործողենք աշխատելու, մինչև տեղի կադրերը կարողանան այդ մասնագիտությունը յուրացնեն:

Որտեղ պետք է սպառվեն «Դիլիջան» գարեջրատեսակները:

Ցանկացած տեղական արտադրանք, բնականաբար, ցանկալի է, որ հնարավորինս շատ երկրներում վաճառվի: Հանդիսանալով «Երևանի գարեջուր» ընկերության համասեփականատեր, ինձ համար ցանկալի է, որ «Դիլիջան» գարեջուրը արտերկրներ մեծ քանակով արտահանվի, որպեսզի ներքին շուկայում Կիլիկիայի հետ լրջորեն չմրցակցի:

Ինչ հոսքագծեր եք օգտագործվում արտադրությունում:

Հոսքագծերը ներկրվել են արտասահմանյան երկրներից, եփման արտադրամասինը՝ չեխական արտադրության է, լցման արտադրամասինը՝ գերմանական: Մի մասը նոր է, մի մասն էլ՝ օգտագործված, բայց փայլուն վիճակում:

Մեր գրույցի վերջում պարոն Հակոբյանը հավաստիացրեց, որ «Դիլիջան» գարեջուրը արտադրվելու է բարձր որակով, իսկ գինը լինելու է մոտավորապես մեր տեղական գարեջրերի գնին համարժեք:

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ, ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՄՆՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ

Արարարի մարզի Վեդի բնակավայրի հիմնադրման պատմությունը գալիս է դարերի խորքից: Քաղաքի հիմնադրման և մնացած այլ հարցերի շուրջ զրուցեցինք 1999 թվականից Վեդի քաղաքի քաղաքապետ Վարուժան Բարսեղյանի հետ:

Վ. Բարսեղյանը ծնվել է Վեդի քաղաքում: Մասնագիտությամբ պատմաբան քաղաքապետն աշխատանքային գործունեությունը սկսել է Վեդու թիվ 2 միջնակարգ դպրոցից՝ պատմության ուսուցիչ, հետո՝ փոխտնօրեն, այնուհետև Արարարի շրջկոմում՝ հրահանգիչ, 1995թ. ընտրվել է Վեդու ավանային խորհրդի նախագահի տեղակալ: 1996 թ. Վեդու քաղաքապետի տեղակալ: 1999թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում աշխատել է ՀՀ Արդարադատության նախարարության ԴԱՀԿ մարզային ստորաբաժանման պետ: 2001 թ. ավարտել է նաև Սանկտ-Պետերբուրգի արտաքին կապերի համալսարանի Երևանի մասնաճյուղի իրավագիտության բաժինը: 1988-1992 թթ. ակտիվորեն մասնակցել է ՀՀ Արարարի մարզի տարածքում, ազգամիջյան հարաբերությունների լարման թուլացման ուղղությամբ կազմակերպվող միջոցառումներին, երկրապահ կամավորական ջոկատում մասնակցել է Երասխավանում սահմանների պաշտպանությանը:

Պարոն Բարսեղյան, երբ է հիմնադրվել Վեդի բնակավայրը՝ քաղաքի պատմությունը:

Վեդի քաղաքի հիմնադրման տարեթիվ մասին ստույգ տեղեկություններ չկան: Բնակավայրի մասին առաջին հիշատակությունները գալիս են դեռևս ուրարտական ժամանակներից: Շրջապատում պահպանվել են բերդ-ամրոցներ, կարասներ, խաչքարերի տեսքով գերեզմանաքարեր: Վեդի անունն առաջին անգամ հիշատակվում է XIII-XIV դարերում՝ Նորավանքում, Օրբելյանների թողած նվիրագրական արձանագրություններում: Այնուհետև Վեթի, Վադի անվանումով հիշատակվում է մինչև XIX դարի սկիզբը: Ըստ ռուս աշխարհագիր Ի.Շոպենի՝ բնակավայրը 1830 թ. ունեցել է Վեդին Վեդի անվանումը: Այն 19-րդ դարի կեսին զբաղեցնում էր Վեդի գետի երկու ափերը, ուներ մեծ և հին եկեղեցի, 240 տուն թաթար և 12 հայ բնակիչ:


Մինչև 1930 թ. եղել է գավառակի կենտրոն, իսկ 1930 թ. սեպտեմբերի 9-ի վարչական ռեֆորմով ստեղծվել է Վեդու շրջան, որից 1938-1947 թթ. առանձնանում է Ղարաբաղյանի շրջանը: Վեդին 1958 թ. ունեցել է 4500 բնակիչ: Դեռ 1962 թ. Վեդին ուներ ավանի, իսկ 1996 թ.՝ արդեն քաղաքի կարգավիճակ:

Պարոն Բարսեղյան, քաղաքի բնակչությունն այսօր, հիմնականում ինչով է զբաղվում:

Քաղաքի բնակչության հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ, Վեդի համայնքում գյուղացիական տնտեսությունների թիվը հասնում է 1086: Հիմնականում զբաղվում են խաղողի /689 միավոր հող/, ցորենի, բանջարաբուստային մշակաբույսերի /1103 միավոր հող/, հնդավոր և կորիզավոր /281 և 220 միավոր հող/ պտուղների աճեցմամբ: Հիմնական սպառման շուկաներն են՝ տեղի շուկաները և գյուղատնտեսության մթերման գործարանները:

Շուրջ երկու տասնյակ տարիներ Վեդի քաղաքի քաղաքապետն եք, այդ ժամանակահատվածում ինչ կարևոր աշխատանքներ են կատարվել համայնքում, որոնք թեթևացրել են բնակչության հոգսը:

Իմ ղեկավարած տարիներին հիմնադրվել է քաղաքային մարզադաշտը,



մարզադաշտը, Վեդու Մշակույթի տունը, վերականգնվել և ընդլայնվել է լուսավորության ցանցը, համայնքի շուրջ 14 փողոցների ասֆալտապատում է իրականացվել, ասֆալտապատվել են նաև 36 շենքերի բակային տարածքները, իրականացվել են բազմաբնակարան շենքերի տանիքների, մուտքերի և ջրամուտքերի վերանորոգման, մայթերի սալկապատման աշխատանքներ: Համայնքի բանուկ հատվածներում տեղադրվել են նստարաններ, կանգառներ, աղբամաններ: Իրականացվել են աղբահանության, սանմաքրման աշխատանքներ: Աջակցել ենք նաև Վեդու բժշկական կենտրոնին:

Մոտ 1100 երեխաներ, յուրաքանչյուր տարի, ստանում են նախադպրոցական և արտադպրոցական կրթություն:

Ուշադրության կենտրոնում են եղել անապահով ընտանիքների խնդիրները, ինչպես նաև աջակցել ենք բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող անապահով ընտանիքների երեխաների ուսման վարձերի, անապահով ընտանիքների անդամներից բուժման կարիք ունեցողների ծախսերը:

Բնակչության սոցիալ-կենցաղային պայմանները էլ ավելի բարեկեցիկ դարձնելու համար, ինչ աշխատանքներ են անհրաժեշտ իրականացնել:

Կան թաղամասեր, որոնք ունեն գազաֆիկացման, ասֆալտապատման խնդիրներ: Անհրաժեշտ է աջակցել մասնավոր հատվածին՝ նոր աշխատատեղերի բացման գործում:

Ինչպիսի առաջնային խնդիրներ կան քաղաքում, որոնք հրատապ լուծումներ են պահանջում:

Այսօր կարևորում ենք քաղաքի կանաչապատման համար ոռոգման ցանցի վերանորոգումը, որի ուղղությամբ արդեն աշխատանքներ են իրականացվում: արդիական է նաև քաղաքի լուսավորության հարցը, փողոցների ասֆալտապատումը, նոր թաղամասերում՝ կոյուղագծերի կառուցումն ու գազաֆիկացումը:

Ինչպես է կազմակերպվում բնակչության ազատ ժամանակը, /կրթություն, մշակույթ, մարզական կյանք/:

Համայնքապետարանի կողմից, ամռան ամիսներին կազմակերպվում և անց են կացվում համերգներ: Ունենք զբոսայգի, որտեղ իրենց ազատ ժամանակն ենանցկացնում ինչպես երիտասարդները, այնպես էլ՝ տարեցները:

Ինչ ծրագրեր և համագործակցություններ պետք է իրականացնեն:

Նախատեսում ենք համայնքի տարածքում չրանոցներ հիմնել, ջերմոցային տնտեսություններ և սպանդանոց կառուցել: Առաջիկա տարիներին գյուղացիական տնտեսությունների համար անհրաժեշտ է ստեղծել նաև սառնարանային տնտեսություններ: Նախատեսվում է համայնքում ներդնել արևային սնուցում ստացող լուսավորության ցանց:

Էջի նյութերը՝ Մանվել Կիրակոսյանի

ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

ՄՈԼՈՐԱԿԸ ՄԵՐ ԿԱՆԱԶ ԲՆԱԿԱՎԱՅՐՆ Է, ՈՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ



-Պրն. Հակոբյան, հանքարդյունահանման աշխատանքների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև բնապահպանական հավասարակշռությունը պահպանելու նպատակով, ինչ աշխատանքներ են տարվել:

-Հանքավայրերի շահագործման և օգտակար հանածոների վերամշակման արդյունավետության բարձրացման նպատակով, կազմակերպություններին տրվել է մասնագիտական և խորհրդատվական աջակցություն: Ուսումնասիրվել է համապատասխան առաջարկություններ են արվել ընդերքօգտագործման և բնապահպանության ոլորտներին առնչվող իրավական ակտերի մի շարք նախագծերի վերաբերյալ: Մարզի հանքարդյունաբերական կենտրոններում (Ալավերդի, Թեղուտ, Արմանիս, Ախթալա) պարբերաբար անց են կացվում լեռնարդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող ռիսկերի գնահատման և դրանց մեղմացմանն ուղղված հանդիպում-քննարկումներ, որոնց մասնակցում են թիրախային համայնքների ղեկավարներ, ակտիվ քաղաքացիներ, ՀԿ-ների, ԶԼՄ-ների, պետական կառույցների, ինչպես նաև հիմնարկ-ձեռնակությունների և այլ շահառու կողմերի ներկայացուցիչներ: Մարզի ընդերքի օգտագործման և օրինակաբանության վերաբերյալ պահանջվող ձևաչափով, համապատասխան գերատեսչություններին պարբերաբար ներկայացվել են տեղեկանքներ:

Վերջին 4 տարիներին, ՀՀ պետական բյուջեի կողմից, բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարները կազմել են՝ 2013 թ.-ին՝ 275 164.8, 2014 թ.-ին՝ 223 998.4, 2015 թ.-ին՝ 148 755.1, 2016 թ.-ին՝ 52 506.4 դրամ: Իսկ 2017 թ.-ին, այդ նպատակով նախատեսված է 111 667.2 դրամ: ՀՀ բնապահպանության նախարարությանն առաջարկություն է ներկայացվել, որպեսզի Լոռու մարզից ևս մի քանի համայնքներ ընդգրկվեն վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկում: Կարծում եմ, ակնկալվող բնապահպանական նպատակային գումարներն էապես կնպաստեն ազգաբնակչության առողջության և շրջակա միջավայրի պահպանման բարելավմանը:

-Բնապահպանական խնդիրների կարգավորման գործընթացում էական դերակատարություն ունի նաև վտանգավոր թափոնների հեռացումը,

ՀՀ Լոռու մարզը հարուստ է փարբեր օգտակար հանածոներով և իր այդ նշանակությամբ, երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում: Մարզի փարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 35 կազմակերպություններ, որոնցից 4-ը կապարում են մետաղական հանքավայրերի շահագործում (շահագործվում են Շամկուղի պղնձի, Թեղուրի պղինձ-մոլիբդենային և Մղարթի ու Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը): Թեմայի առնչությամբ «Ագրոյրարտորի» հարցերին է պատասխանում ՀՀ Լոռու մարզպետարանի բնապահպանության և գյուղավարչության պետ Գրիգոր Հակոբյանը:

ինչպես նաև աղբահանության կանոնավոր կազմակերպումը: Ինչ աշխատանքներ են տարվում մարզում այս ուղղությամբ:

-Ընթացքի մեջ է հայ-գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում, «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ (ք. Վանաձոր)» ծրագիրը: Այն ենթադրում է ՀՀ Լոռու մարզում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայրեր, որոնք կսպասարկեն մարզն ամբողջությամբ:

Նոր աղբավայրերի շահագործմանը զուգընթաց, կլուծվի նաև համայնքներում տարերայնորեն առաջացած ապօրինի աղբավայրերի լիկվիդացման հարցը: Մարզպետարանի կողմից տարվող հետևողական աշխատանքի շնորհիվ, մարզի գյուղական 5 համայնքներ ևս ձեռք են բերել աղբարկղներ և սկսել են կատարել կանոնակարգված աղբահանության աշխատանքներ: Ինչ վերաբերում է ՀՀ Լոռու մարզում վտանգավոր թափոնների առկայությանը, ապա դրանք հիմնականում հանդես են գալիս ժամկետանց դեղորայքի տեսքով: Բժշկական թափոնների վնասագերծումը ոչ միայն առողջապահական, այլ նաև կարևոր բնապահպանական հիմնախնդրի լուծում է: Մարզպետարանի աջակցությամբ վտանգավոր թափոնների վնասագերծմամբ զբաղվող մասնագիտացված ընկերությունները պայմանագրեր են կնքել մարզի բուժ-հիմնարկների հետ, և ըստ համատեղ մշակված ժամանակացույցի՝ իրականացնում են ժամկետանց դեղորայքի և բուժապարագաների տեղափոխում և վնասագերծում: Ալավերդու քաղաքապետարանի պատվերով իրականացվել են մկնդեղի թափոնակուտակիչի ռիսկերի մեղմանն ուղղված և այն հետազայում անվտանգ վիճակի բերելու միջոցառումների նախագծա-նախահաշվային աշխատանքներ: Հարկ է նշել, որ մկնդեղի գերեզմանոցի բնապահպանական հիմնախնդրի լուծման նպատակով առկա նախագծի հիման վրա կկազմվի գործողությունների ծրագիր, որը կներակայացվի համապատասխան գերատեսչություններին և միջազգային դոնոր կազմակերպություններին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.37 կետը՝ բնության և շրջակա միջավայրի պահպանության ու ընդերքօգտագործման բնագավառներում, համաձայն տրված հարցաշարերի, 2016 թ. ընթացքում ՀՀ Լոռու մարզի 14 համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն և արդյունքները ներկայացվել են տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը «Հանքարդյունաբերական շրջակա միջավայրի անկախ մշտադիտարկում» ծրագրի շրջանակներում, մարզի Ալավերդի, Ախթալա և Ստեփանավան (Արմանիս) համայնքների մի շարք մանկապարտեզների և դպրոցների բակերում, հողի և խմելու

ջրի նմուշներում, իրականացրել է ծանր մետաղների կոնցենտրացիաների վերաբերյալ հետազոտում, որի արդյունքների ներկայացմանը մասնակցել են ՀՀ կառավարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, հանքարդյունաբերական ընկերությունների, միջազգային դոնոր և զարգացման կազմակերպությունների ներկայացուցիչներ, դպրոցների և մանկապարտեզների տնօրեններ, և այլն: Հետազոտությունների արդյունքներն ուղարկվել են շահագրգիռ համայնքներին և հանձնարարվել, որպեսզի մանրամասն ուսումնասիրվեն և առաջիկայում պետական, համայնքային կամ այլ ֆինանսական միջոցներով իրականացվեն թիրախային մանկապարտեզների և դպրոցների բակերի ասֆալտապատման կամ բետոնապատման աշխատանքներ, որպեսզի հնարավորինս նվազեցվի և չեզոքացվի ծանր մետաղների վնասակար ազդեցությունը:

-Պրն. Հակոբյան, բնապահպանության ոլորտին առնչվող ինչ սեմինարներ, գիտաժողովներ և կոնֆերանսներ են կազմակերպվել մարզում: Որոնք են դրանցից առավել կարևորները:

-Հասարակական լուսմներ են կայացել «Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն մաքսային կետ»-ի ավտոմայրուղու վերակառուցման աշխատանքների վերաբերյալ: Իսկ շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ կայացել է հանրային քննարկում «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի շուրջ: Կարևորներից էին նաև «Դեպի Մարաբեշ՝ Հայաստանը Կլիմայի փոփոխության կոնվենցիայի Կողմերի 22-րդ նստաշրջանի նախաշեմին» կոնֆերանսը, «Աղետների ռիսկերի նվազեցման ներառական (ԱՌՆՆ) ծրագրի» վերաբերյալ սեմինարը: Կարևոր էր նաև «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագրի մեկնարկային աշխատաժողովը՝ հանդիպում-քննարկումը՝ Լոռու մարզպետարանի նիստերի դահլիճում, ինչպես նաև խորհրդատվական խորհրդի նիստի գումարումը: Քննարկում է կայացել նաև անտառային օրենսգրքի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Կայացել է նաև Լոռու մարզպետարանում հանդիպում-քննարկում՝ Ալավերդու պղնձածուլական գործարանի արտանետումների վերաբերյալ: Իրականացվել է «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների պլանի մշակում՝ Վանաձոր քաղաքի համար» ծրագիրը: Մասնակցել ենք նաև Վանաձորում սանէպիդկայանի նոր մարզային լաբորատորիայի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային, «Կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների պլանի» մշակում ծրագրի կյոթ սեղան-քննարմանը: Հանդիպում-քննարկում է կայացել նաև Վանաձորի քիմիական

գործարանի թափոնակուտակիչի պարունակությանն ու պահպանությանն առնչվող թեմայով:

Մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումներն ու հասարակական լուսմները հիմնականում անց են կացվել մարզպետարանի նիստերի դահլիճում և մարզում գործող բնապահպանական տեղեկատվական երեք Օրիուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան): Հասարակական լուսմներին մասնակցում են ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ՝ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ԶԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ:

-Պրն Հակոբյան, բնապահպանական կարևոր խնդիրներից առաջնահերթն անտառների վերականգնումն ու պահպանումն է, որը հաջողությամբ կարող են իրականացնել միայն արհեստավարժ մասնագետները: Ինչ աշխատանքներ են տարվում մարզում՝ լավագույն մասնագետների պատրաստման ուղղությամբ:

-Լավագույն և ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման ուղղությամբ ՀՀ Լոռու մարզում զգալի աշխատանքներ է տանում ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղը: Մասնաճյուղում գործող «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում» մասնագիտությամբ մինչ օրս եղել է 73 շրջանավարտ, այժմ հեռակա ուսուցմամբ սովորում են 71 ուսանողներ: Ուշագրավն այն է, որ ԱՏ 5-րդ կուրսի ուսանողներ Գարիկ Սահակյանը և Արթուր Քալաշյանը աշխատում են ՀՀ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի՝ համապատասխանաբար՝ Գուգարքի և Ստեփանավանի մասնաճյուղերում: Նշենք նաև, որ որոշ շրջանավարտներ նույնպես աշխատում են մասնագիտությամբ՝ Զիլիգայի, Լալվարի և Դսեղի անտառտնտեսություններում: Այլ կերպ ասած՝ մասնաճյուղի շրջանավարտներն աշխատանքով ապահովվածության խնդիր չունեն, քանի որ մասնագիտությունը պահանջարկ է վայելում, իսկ շրջանավարտներն աչքի են ընկնում գիտելիքների բարձր մակարդակով:

Բնապահպանական կայուն վիճակի, հավասարակշռության պահպանումն առաջնահերթ խնդիրներից է, որի կարգավորման նպատակով արվում է հնարավորը՝ թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների և ՀԿ-ների, և թե՛ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից: Բնապահպանական անվտանգության ապահովումը մոլորակի խնդիրն է, որի իրագործման գործընթացում իր առանձնահատուկ դերակատարությունն ունի երկրի յուրաքանչյուր բնակավայր: Այդ յուրահատուկ առաքելության մեջ իր մասն ու բաժինն ունի նաև ՀՀ Լոռու մարզը՝ իր հարուստ բուսական և կենդանական աշխարհով: Մոլորակը մեր կանաչ բնակավայրն է, որը պահպանության և պաշտպանության կարիք ունի: Եվ դրանում մեր մասնաբաժինն ունենք յուրաքանչյուրս՝ յուրովի:

Հարցազրույցը՝ Նելլի Սահակյանի

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՏԱՎԱՐԻ ՆԱԽՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նախրի վերարտադրությունը՝ փարվա ընթացքում կենդանիների գլխաքանակի պահպանումը կամ ավելացումն է՝ առավել մթերատու կենդանիների բազմացման միջոցով: Նախրի վերարտադրությունը լինում է հասարակ /պարզ/ և ընդլայնված:

Հասարակ վերարտադրության դեպքում կենդանիների գլխաքանակը նախրում, տնտեսությունում չի ավելանում, այսինքն՝ տարվա սկզբին և վերջին մնում է նույնը: Ընդլայնված վերարտադրության դեպքում կենդանիների գլխաքանակը տարվա ընթացքում ավելանում է, ավելի շատ կենդանիներ են մուտք գործում նախիր, քան՝ դուրս գալիս: Այդ ավելացումը կարող է լինել տարբեր չափերի մինչև 5-10 տոկոս և ավելի:

Նախրի բնականոն վերարտադրությունն ապահովելու և որակը բարելավելու համար անհրաժեշտ է ամեն տարի նախրից հանել /խոտանել/ ցածր մթերատու, ծեր, անբուժելի հիվանդ կամ այլ արատներ ունեցող կովերին և դրանք փոխարինել բարձր մթերատու, առողջ և երիտասարդ կենդանիներով: Սովորաբար, ապրանքային նախիրներում, ամեն տարի խոտանում են կովերի գլխաքանակի 15-20 տոկոսը, իսկ տոհմային նախիրներում՝ 20-25 տոկոսը: Խոտանված կովերին փոխարինելու համար տնտեսությունում ստացված էգ մատղաշի 75-80 տոկոսը պետք է աճեցնել, թողնել նախիրը համալրելու համար: Օրինակ՝ եթե ֆերմերն ունի 10 կով, տարվա ընթացքում նրանցից ստացվում է 8 հորթ /4 արու, 4 էգ/, ապա ծնված 4 էգ հորթից 3-ը /75 տոկոս/, պետք է աճեցնի նախիրը համալրելու համար: Նախրի նորմալ վերարտադրությունն ապահովելու համար անհրաժեշտ են անասնաբուժական, անասնաբուժական և կազմակերպչական մի շարք միջոցառումներ: Նախ պետք է վերացնել կամ խիստ կրճատել կովերի ստերջությունը, որը մի շարք ֆերմերների նախիրներում կազմում է մինչև 20-25 տոկոս և ավելի: Ստերջ են համարվում այն կովերը, որոնք տվյալ տարվա ընթացքում չեն ծնել: Տարվա սկզբին եղած յուրաքանչյուր 100 կովերի հաշվով պետք է ստանալ 95-100 հորթ: Այնուհետև անհրաժեշտ է ծնված մատղաշը պահել անկորուստ: Հայտնի է, որ ֆերմերային շատ տնտեսությունում ծնված հորթերի մի զգալի մասը /25-30 տոկոս/ առաջին իսկ տարում սատկում կամ ենթարկվում են հարկադիր մորթի: Մատղաշի ելքերի կրճատումը մեծ ռեզերվ է նախրի նորմալ վերարտադրությունն ապահովելու, տնտեսությունում կաթի և տավարի մսի արտադրությունն ավելացնելու գործում: Կարևոր նշանակություն ունի նաև նախրի նորոգման համար աճեցվող էգ մատղաշի ժամանակին զուգավորումը կամ սերմնավորումը: Ֆերմերային մի շարք տնտեսություններում էգ մատղաշը զուգավորում են ուշ հասակում՝ մոտ երկու տարեկանում և ավելի ուշ: Այդ պատճառով կյանքի ընթացքում կովերից ստացվում է քիչ հորթ և քիչ կաթ, արդյունքում ավելանում են նաև մատղաշի աճեցման վրա կատարվող կերի և այլ ծախսերը:

Կովկասյան գորշ ցեղի նորոգման էգ մատղաշը պետք է զուգավորել 17-18, իսկ սևաբղետ ցեղինը՝ 16-17 ամսակա նում: Այստեղ կարևոր է ոչ այնքան մատղաշի տարիքը, որքան կենդանի զանգվածի զուգավորման ժամանակը: Էգ մատղաշն առաջին զուգավորման ժամանակ պետք է ունենա տվյալ ցեղի չափանիշներով նախատեսված լիատարիք կովերի կենդանի զանգված առնվազն 75 տոկոսը: Կովկասյան գորշ ցեղի համար այն 7-18 ամսականում կազմում է 360-370 կգ, իսկ սևաբղետ ցեղի համար, 16-17 ամսականում՝ 380-400

կգ: Կարևոր է նաև կովերի օգտագործման տևողության երկարացումը:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կովկասյան գորշ ցեղի կովերի օգտագործման տևողությունը, տոհմային նախիրներում կազմում է 4,2 լակտացիա, որը շատ կարճ է: Ցանկալի է, որ կովերը տնտեսությունում օգտագործվեն 5-6 տարի, այսինքն՝ մինչև 8-9 տարեկանը: Սա ևս կնպաստի կաթի և հորթերի քանակի ավելացմանը՝ մեկ կովի կյանքի ընթացքում: Սակայն ցածր մթերատու կովերին, որոնք ունեն տվյալ նախրի միջինից ցածր մթերատվություն, պետք է ժամանակին խոտանել՝ անկախ տարիքից: Կովերի հիմնական խոտանումը կատարում են առաջին լակտացիան ավարտելուց հետո, երբ պարզ է լինում տվյալ կովի մթերատվության մակարդակը: Այն համարվում է սեյեկցիայի արդյունավետ մեթոդներից մեկը: Նախրի օպտիմալ կառուցվածքը նույնպես կարևոր է վերջինիս վերարտադրության գործում: Նախրի կառուցվածքը տարբեր սեռահասակային խմբի կենդանիների տոկոսային հարաբերությունն է նախրում: Այն տարբեր է լինում՝ կախված տեղանքի բնակլիմայական պայմաններից՝ տավարաբուծության ուղղությունից /կաթնատու, կաթնամսա-



տու, մսատու/ և այլ պայմաններից: Մեր հանրապետության նախալեռնային և լեռնային գոտիներում, բնական արոտների օգտագործմամբ, ցանկալի է բուծել կովկասյան գորշ ցեղի և մյուս գորշ ցեղերի /ավստրիական, շվեյցարական, գերմանական սեյեկցիայի շվից ցեղերի տավար/, որոնք ունեն կաթնամսատու ուղղություն, իսկ ցածրադիր գոտու պայմաններում /Արարատյան հարթավայր և քաղաքամերձ տնտեսություններում/ կովերի շուրջնառայա մսուրային պահվածքի պայմաններում՝ կաթնատու ուղղության ցեղերը /սևաբղետ, հոլշտին և այլն/: Կովերի տեսակարար կշիռը կաթնամսատու ուղղության նախիրներում՝ նախալեռնային և լեռնային գոտիներում, ցանկալի է լինի 40-45 տոկոս, իսկ կաթնատու տիպի նախիրներում՝/ցածրադիր գոտի/ 45-50 տոկոս և ավելի:

Կովերի տեսակարար կշիռը նախիրներում 40-45 տոկոս լինելու դեպքում, մսատու մատղաշը կարելի է աճեցնել տվյալ տնտեսությունում և մսի տալ մինչև 15 ամսականը: Կովերի տեսակարար կշիռը նախիրներում 45 տոկոսից բարձր լինելու դեպքում /ցածրադիր գոտի/ մսատու մատղաշը վաղ տարիքում /մինչև 6 ամսականը/ պետք է հանվի տնտեսությունից և տրվի մասնագիտացված ձեռնարկություններին հետագա լիաճեցման և բուժման համար: Նկատենք, որ կովերի տեսակարար կշիռը նախրում ավելանալով՝ ավելանում է կաթի արտադրությունը և նվազում մսի արտադրությունը, քանի որ մսատու մատղաշը տնտեսությունից պետք է հանվի ավելի վաղ հասակում:

Խաչապուր Սիմոնյան

Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր,
Արմեն Սիմոնյան

Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Գինեգործության ավանդույթների վերածնունդը
նույնպես նորարարություն է

Ասում են նորը լավ մոռացված հինն է, և այդ խնամարտ գինեգործության ոլորտում հարուստ ավանդույթներ ունեցող Հայաստանի համար դրանց վերածնունդը նորարարություն է: Առավել ևս, որ այդ գործով կին է զբաղվում: Գինեգործությունը Հայաստանում ավանդաբար համարվել է բացառապես տղամարդկանց ոլորտ, սակայն Golden Grape ArmAs գինու և կոնյակի գործարանի տնօրեն Վիկտորիա Ասլանյանը կոտրում է այդ կարծրաբերությունը՝ իր գործունեությամբ և ճանաչվածությամբ ապացուցելով, որ գինին, բիզնեսն ու միջազգային շուկան ոչ թե կին կամ տղամարդ է հարգում ու ճանաչում, այլ գործին նվիրված անհատի, որը գնում է իր երազանքի հետևից ու իրականություն դարձնում այն:

Տիկին Ասլանյան, ինչու եք հենց գինեգործության ոլորտն ընտրել:

—Հայրս առաջինն էր, որ 2007 թվականին ԱՄՆ-ից վերադարձավ Հայաստան և ներդրումային մեծ ծրագիր սկսեց: Երբ 2008-ին մենք եկանք ու տեսանք, թե նա ինչ հրաշք է կարողացել ստեղծել Արագածոտնի մարզում 180 հեկտար ամայի, քարքարոտ տարածքի վրա, որը գուրկ էր որևէ ենթակառուցվածքից՝ ոռոգման ջրից, էլեկտրականությունից, ճանապարհներից և այլն, մենք ևս ոգեշնչվեցինք ու որոշեցինք վերադառնալ Հայաստան, լինել նրա կողքին ու իրականացնել այդ պրոեկտը: Արդեն 2009-ին ինքս տեղափոխվեցի Հայաստան, անմիջապես անցա գործի, 2010-ին սկսեցինք կառուցել գործարանը... Ուշագրավ է, որ հենց նույն ժամանակաշրջանում՝ 2007-ին, Հայաստանում, Արենի քարանձավում հայտնաբերվեց աշխարհի ամենահին գործարանը, որն ունի 6100 տարվա պատմություն և մենք վստահ էինք, որ այդ տեղեկատվությունը պետք է ճիշտ օգտագործել, քանզի պատմությունը, որ մենք ունենք, ոչ միայն բիբլիական լեգենդն է Նոյան տապանի մասին, այլ ունենք ապացույցներ, որ առաջին գինեգործները ենք, առաջին այգեգործները, արտակարգ որակ ենք ապահովել, նույնը կարող ենք անել այսօր ու դեռ ավելին: «ԱրմԱսը» վերածնունդ է հայկական գինեգործության բարի ավանդույթները՝ ստեղծելով նրբահամ գինիներ, որոնք մատուցում է աշխարհին նաև մեր հարուստ պատմության էջերը բացահայտելով: Այն, որ Հայաստանը համարվում է պատմական գինու երկիր, աշխարհում քչերը գիտեն, և մեր պատասխանատվությունն այն բացահայտել աշխարհին, ինչն իր հերթին մեծ ազդեցություն կունենա Հայաստանի ողջ տնտեսության վրա:

Ինչպե՞ս Ձեզ ընդունեց այս ոլորտը՝ հաշվի առնելով ոչ միայն այն, որ կարճ ժամանակում կարողացաք նորարար գաղափարներով փոփոխություններ բերել գինու շուկայում, այլև երկար տարիներ դրսում եք ապրել:

—Կարող եմ ասել, որ իմ մուտքը որևէ բացասական արձագանքներով կամ երևույթներով չի ուղեկցվել: Ես չեմ աշխատել, որ ոլորտն ինձ ընդունի, այլ աշխատել և աշխատում եմ, որպեսզի հայկական գինիները միջազգային շուկայում ընդունվեն: Մեր նպատակն է, որպեսզի «ԱրմԱսը» ճանաչվի տարբեր մարդկանց կողմից որպես հայկական որակյալ գինի՝ որպես առաջնորդներից մեկը: Իսկ դրա համար շատ բան է արվում. մենք այնքան տարբեր միջոցառումների ենք մասնակցում աշ-



խարհի տարբեր երկրներում, ինձ հրավիրում են, որպեսզի ես պատմեմ այս ամենի մասին, ես ինքս եմ մեկնում ու շատ ծրագրեր ենք իսկապես իրականացնում: Կարելի է ասել, որ մեծ ներդրում ենք կատարում այս գործի մեջ: Հայաստանում էլ գինեգործության ոլորտի շատ արտադրողների հետ մտերիմ ենք, համագործակցում ենք ու թեև ամենքս մեր տեղն ու դերը ունենք շուկայում՝ գնային ու համային առանձնահատկություններից ելնելով, բայց ուղղակի անհրաժեշտություն է, որ մենք լավ համագործակցենք ու ճանաչվենք որպես գինեգործ երկիր: Մեր բոլորիս մրցակիցները դրսում են, և այդ պատճառով էլ, երբ արտերկրում մասնակցում ենք տարբեր ցուցահանդեսների, մենք մասնակցում ենք, որպես երկիր և շատ հազվադեպ որպես անհատներ:

Հայաստանում որքանով է կնոջ համար դժվար ստեղծել իր գործն ու կայանալ այստեղ:

—Իրականում ամբողջ աշխարհը կարելի է այդպիսին համարել, բայց դա էլ ընկալման և տեսանկյունի խնդիր է: Ինձ շատ հաճախ են այդ հարցը տալիս, և հիմնականում ես նույն պատասխանն եմ տալիս՝ կարևորը նախևառաջ այն է, թե ինչպիսի դեկավար ես, ինչ արտադրանք ես դու ապահովում: Օրինակ, եթե արտադրում ես այնպիսի ապրանք, որն արտահանվում է, ապա խանութում այն գնորդը չգիտի, թե ով է արտադրել. որակն է խոսում դրա փոխարեն, որն էլ տղամարդու կամ կնոջ շնորհք չէ, այլ աշխատանքի կազմակերպման և այլնի շնորհք է: Ես երբեք չեմ վերցրել ինձ վրա լավը կամ չեմ հրաժարվել վատից, քանզի մենք թիմ ենք և աշխատում ենք հանուն մի նպատակի՝ որակյալ արտադրանք, որը ճանաչելի կդարձնի մեր հայրենիքը, մեր պատմությունն ու ավանդույթները: Իսկ գինեգործությունը մեր երկրում իսկապես ունի մեծ հնարավորություններ, քանի որ Հայաստանն իր աշխարհագրական դիրքով, արևային օրերի քանակով, ցուրտ ձմեռներով ու տաք ամառներով, հողի շերտերի բազմազանությամբ ու դրանցում առկա հարուստ հանքանյութերով շատ նպաստավոր պայմաններ ունի խաղողագործության ու գինեգործության զարգացման համար:

Ինչ ծրագրեր ունի Վիկտորիա Ասլանյանն առաջիկայում, ինչ նորություններ կարելի է ակնկալել:

—Օրինակ՝ շուտով մեր գործունեության մասին գրելու են Los Angeles Times-ում, որը 2,5-3 մլն տպաքանակ ունի և էլ ավելի մեծ լսարան: Այս տարի առաջին անգամ գինիներ արտահանելու ենք Մեծ Բրիտանիա, նախորդ տարվա ընթացքում Ճապոնիա ենք ուղարկել, բացի այդ, մեր գինիներն արդեն արտահանվում են եվրոպական մի շարք երկրներ, ԱՄՆ և Կանադա: Ծրագրերն իսկապես շատ են, ցանկությունն էլ ավելի մեծ՝ այդ ամենը կյանքի կոչելու, այնպես որ սպասեք նորություններին:

Լ. Խոջոյան

«ԻՄ ՆԱԽԱՄԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔՆ Է...»



*Մեռնելի՝ զարնան հողի մեջ տարփող
Ու շնչայի հեքիաթը կյանքի
Եվ ավերաբեր զարնան բուրմունքով
Ես հող դառնայի, բայց ոչ թե մեռած,
Այլ՝ փթթող զարնան բուրմունքով արբած...
Այդպես կարոտով ու կյանքով գերված՝
Նորից ապրելի...*

Մեղորա Խաչատրյան

Աշխարհում կան նվիրյալներ, ովքեր պատաստ են իրենց երկրային առաքինությունը կատարել մինչև վերջին կենդանի բջիջը, մարման անվերադարձ շունչը... Գրելով այս տողերը՝ կարծես ապրում եմ մի զարմանալի ափսոսանք եղելության մասին, թեպետ ինձ պարտություն է նաև սփոփանքի, ոգևորության զգացումը դեպի կյանքը: 2017 թ. հունիսի 5-ին կյանքը գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, գրող, բանաստեղծուհի, հասարակական գործիչ Մեղորա Խաչատրյանի ծննդյան 80-ամյակը և սույն ամսվա 14-ին նրա՝ մահվան երրորդ տարեկիցը:

Բազմաբեղուն էր Մ. Խաչատրյանի գործունեությունը: Գիտական շուրջ 60 աշխատանք, 5 գյուտ, ԽՍՀՄ ԺՏՆՑ մրցանակակիր, բազմաթիվ հրապարակախոսական հոդվածների, գրքերի հեղինակ:

Մեղորա Խաչատրյանը ՀՀ գյուղատնտեսական ակադեմիայի թեզերի պաշտպանության խորհրդի անդամ էր, ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն առընթեր անասնաբուծության գիտական զարգացման գիտամեթոդական խորհրդի քարտուղար: Նա ամեն կերպ աջակցում էր ճյուղի վերելքին, նպաստում գիտական կադրերի պատրաստման առաջընթացին: Նրա անունը գրվել է Մոսկվայի Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայի տավարաբուծության ամբիոնում ստեղծված կարմիր գրքում՝ ի թիվս անասնաբուծական գիտության առաջատար այլ գիտնականների:

Հայկական անասնաբուծության և անասնաբուծության գիտահետազոտական ինստիտուտի տավարի բուծման և գենետիկայի բաժնում նա երկար տարիներ աշխատեց որպես ավագ, ապա առաջատար գիտաշխատող՝ ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր, պրոֆեսոր, Գյուղատնտեսական ակադեմիայի ակադեմիկոս Վաղինակ Ոսկանյանի ղեկավարությամբ: 1968 թ.-ից Մ. Խաչատրյանի գիտական գործունեությունն ուղղվում է տավարի էթնիկական ցեղի՝ կովկասյան գորշի ինտերերային հատկանիշների բացահայտման խնդրին:

Գրեթե քառորդ դար նա իրականացրեց մեծածավալ խորագին գիտական հետազոտությո-

յուններ: Համալիր հետազոտությունների հիման վրա Մ. Խաչատրյանը հանրապետությունում առաջինն է տվել տավարի կովկասյան գորշ ցեղի մաշկաձածկույթի մանրակառուցվածքային համապատասխան ֆիզիկամեխանիկական, ապրանքատեխնոլոգիական հատկանշական բնութագրումը՝ իբրև արտադրական հումքի և ըստ կիրառության նպատակի՝ կատարել հստակ դասակարգում: Բազմակողմանի և ծավալուն գիտահետազոտական նյութերը՝ Մ. Խաչատրյանն ամփոփեց դոկտորական թեզում, որն ի դեպ նվիրեց Սպիտակի 1988-ի երկրաշարժի զոհերի հիշատակին: Իր հուշերում Մեղորա Խաչատրյանը դոկտորական թեզի վերաբերյալ բերել է մի զարմանահրաշ դրվագ. «Առաջին կուրսում ուսանելու տարիներին առաջին անգամ մեկնեցի Սուրբ Էջմիածին և այցելեցի վերջինիս կից գանձարան-թանգարանը: Ուշադրությունս սևեռվեց մի հրաշագործ՝ բաց կանաչագույն կերպասյա ոսկեկար, գեղանկար նախշերով ասեղնագործ սփռոց-վարագույրի վրա, որը մի հայուհու 15-20 տարիների աշխատանքի արդյունք էր: Տարիներ անց, երբ անցա գյուղատնտեսական կենսաբանության գիտահետազոտական ուսումնասիրությունների գործունեության ոլորտը, կանխակալորեն ընտրեցի հյուսվածքաբանությունը, և ամեն անգամ, երբ գույնզգույն կտրուկներ էի պատրաստում, որը մեթոդապես չափազանց նուրբ և աշխատատար է, և դրանք առնում մանրադիտական տեսադաշտի տակ, հիանում էի այնտեղ գծագրված բազում օրգանական բջիջների և հյուսվածքների գույներով, որոնք բազմերանգ էին, ճիշտ այն գույները՝ բաց վարդագույն, երկնագույն... Որպեսզի նմանություն էջմիածնի թանգարանային կերպասի գույներին, նախշերին...»:

Ահավասիկ՝ այս գունային երբնապնակը դարձավ նրա ողջ կյանքի առաջընթացը, սիրո մեղեդին, մարդկային բարոյա-գեղագիտական, բարության և արդարամտության արգասիքը, նրա հավերժության տենչը առ Աստված...

Եվ ինչպես հաճախակի նա սիրում էր կրկնել՝ «Իմ նախասիրությունը կյանքն է...»:

Նանա ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տավուշի մարզի Բերդ համայնքն ունեցավ նոր կոմբայն

Տավուշի մարզի Բերդ համայնքն ադեն նոր կոմբայն ունի: «Նիվա էֆեկտ» մակնիշի հացահատիկահավաք կոմբայնը ձեռք է բերվել Բերդ համայնքի, «Հայ օգնության ֆոնդի» (ՀՕՖ) և Հայաստանի ՓՄՁ Ջարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁ ՋԱԿ) համատեղ ջանքերով՝ ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ ՓՄՁ ՋԱԿ-ի և նրա գործընկերների կողմից իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում:

Համայնքը կոմբայնի ձեռքբերման համար ներդրել է 11.5 մլն դրամ, Հայ օգնության ֆոնդը՝ 7 մլն դրամ, Հայաստանի



ՓՄՁ ՋԱԿ-ը՝ 9մլն. դրամ: «Կոմբայնը կնպաստի համայնքի և շրջանի հողագործության զարգացմանը՝ բարձրացնելով բերքահավաքի արդյունավետությունը և արդյունավետ կազմակերպումը, որն էլ իր հերթին կնպաստի մշակվող հողատարածքների ընդլայնմանը»,- նշեց Բերդ համայնքի ղեկավար Հարություն Մանուչարյանը: Բերդ համայնքում հացահատիկի մշակմամբ զբաղվում է մոտ 200 տնտեսություն:

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի տեղական տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի ղեկավար Արտակ Դադոյանը տեղեկացրեց, որ կոմբայնի ձեռքբերման գաղափարն առաջարկել են ֆերմերները՝ հիմնվելով Տավուշի մարզում անցկացված տնտեսական վերլուծությունների վրա:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:



ԲՈՒՅՍԵՌԻ ԱՇԽԱՐՀ

ՄԵՐ ՄՈԼՈՐԱԿԻ ԱՌԱՎԵԼ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԲՈՒՅՍԵՐԸ

Ամենագեղեցիկ և ամենազգվելի, փխրուն ու զարմանալի տեսքով էակները մեր հարևաններն են: Հենց մեր ոտքերի տակ կամ աշխարհի ծայրը, նրանք վարում են իրենց հետաքրքիր և հանելուկային կյանքը: Նրանք կենդանի են, սակայն զարմանալիորեն տարբերվում են կենդանական աշխարհից:

Վելվիտչիա (Welwitschia): Աճում է հարավային Աֆրիկայում, Նամիբիա անապատում: Տերևները այս բույսի ոլորված են իրենք իրենց շուրջը: Քանի որ Նամիբիայում գրեթե երբեք անձրև չի գալիս, բույսն օգտագործում է իր տերևները՝ մառախուղից կլանում է խոնավություն, ապա կաթիլ առ կաթիլ փոխանցում իր արմատներին:

Յուլաժադիկ: Ժողովրդի կարծիքով, այս բույսն ունի խիստ բնավորություն, այստեղից էլ բխում է անունը: Այս ծաղիկը ամենաբարձրն է Եվրոպայում, աճում է ծովի մակարդակից 4300 մետր բարձրության վրա:

Ամենահին ծառերից է Գինկգոն, աճում է չինական Zhejiang նահանգում: Ճապոնիայում, Գինկգո կոչվում է «Արծաթե ծիրան»:

Ամենամեծ Կակտուսը աշխարհում՝ SAGUARO, աճում է Մեքսիկայում և Արիզո-

նայում: Այն հեշտությամբ է բարձրանում 15 մետր և կշռում է 6-10 տոննա: Կակտուսի ծաղիկը այնքան մեծ է, որ փոքր թռչունները այն դարձնում են իրենց բույն:

Ալպյան ծյունածաղիկ (Edelweiss) - ամենառոմանտիկ բույսը: Իրականում խոսքը գնում է ոչ թե մեկ ծաղկի մասին, այլ մանր ծաղիկների խմբի: Սրանք ցրտադիմացկուն են և կարող են աճել ոչ միայն ժայռերի վրա, այլ նաև հարթավայրերում:

Ամենամեծ գիշատիչ բույսը: Գորտերը, թռչունները, նույնիսկ առնետները կարող են հայտնվել այս բույսի ծուղակում: Այն աճում է Ասիայի արևադարձայինանտառներում, Ինդոնեզիայում:

Ամենավտանգավոր այրող բույսը՝ Նոր Զելանդական եղինջն է: Այն կարող է պանել շուն, նույնիսկ ձի՝ ներարկելով մաշկի տակ թունավոր խառնուրդ: Տերևների վրա գտնվող բարակ այրողմագիկները պարունակում են մրջնաթթու և այլ թունավոր նյութեր:

Օրխիդեա: Այս բույսի ընտանիքն ամենամեծն է աշխարհում: Այն ունի ավելի քան 25.000 տեսակ, որոնց մեծ մասն աճում է ծառերի վրա: